


ՏԵՐԵՒ ԾՆՈՐԷՆ  
Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ րապրի  
ԳԱՂԻՔ (Եգիպտոս)

E. THOROSYAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոնքագրութեանս վրայ է :

Խոնքագրութեանս ողորմած  
գրութիւնք էս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

ԽՐԱԿՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն  
կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բա-  
ժանորդագիրը որ կ'են Տնօրինութեան հաս-  
ցեիլն :

ԱՐՏԱՍՍՀԻՄԱՆԻ Պատ. բաժա-  
նորդներէն աչ ջերմասցես կը խնդրուի,  
որ բարեհաճիլն նախորդ տարիէն մնաց-  
եալ պարտոց կցելոյ որ կ'են նաեւ իրենց  
ԵՐԿՐՈՐԴ Տարեցրջանի բաժանորդագիրը,  
եւ հարկ չը թողոյ մասնաւոր դիմումնե-  
րու, որով ընդ որդեառութիւն մը պիտի  
ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ տրեւն բազմազարդ  
Տնօրինութեան :

ՎԵՐՋԱԲԱՆ

Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան  
նախորդ Գործ. ժողովոյ Ատենապետ և «Նոր  
Օր» ի նախկին խմբագրապետ ևն. ևն. Տ.  
Սմբատ Բիւրատի ամբաստանագրութեան  
հրատարակութիւնը աւարտեցաւ, ի մեծ ըս-  
փոփանս ընթերցողաց : Ճիշտն ըսելով, այդ  
գրութիւնը նոր լոյս մը չ'սփռեց խնդրոյն  
վրայ. ըսաւ, կրկնեց ինչ որ արդէն մասամբ  
յեղեղուած և մասամբ գուշակուած էր :  
Ամբաստանագիրը ուրիշ բան չ'ընէր, բայց  
միայն մեղսակիցներ փնտռել իր քաջագոր-  
ծութեանց. թէ որ աստիճան յաջողեցաւ,  
դա ընթերցողներու տրամադրութեանն և  
նրբամտութեանն կախեալ է : Հետեւաբար  
չ'ձանրանալով այս կէտին վրայ, և՛ աւելի  
ճիշտը՝ ես իմ կողմէս խոր անդունդի մը  
մէջ թաղելով այլևս այս խնդիրը, կ'ուզեմ  
մի քանի խօսք ընել՝ այս առթիւ «Արշա-  
լոյս» ի կողմէն կատարուած դերին վրայ :  
Երբ այս թերթը սկսաւ հրատարակել  
յիշեալ ամբաստանագրութիւնը, ժողովրդ-  
եան մէջէն շատեր տրանջեցին զայդ վերա-  
գրելով սկզբունքի մը՝ եթէ ո՛չ չ'գոյու-  
թեան՝ գէթ տկարութեան. վասնզի Տիար  
Բիւրատին գէ՛մ նախապարձակը նոյն ինքն  
«Արշալոյս» ը եղած էր : Նախ ամբաստա-  
նել և ապա պաշտպանել :  
Բայց եթէ քիչ մը տրամախոհուի,  
պիտի տեսնուի որ «Արշալոյս» ի ընթացքը  
ոչ միայն արդարութեան եւ օրինասիրու-  
թեան սկզբունքին համաձայն է, այլ նաև

իր պարտաճանաչութեան զօրաւոր մի ապա-  
ցոյցն է :  
Անպատճառ փաստարան կամ քաջ օրէ-  
նագէտ ըլլալու հարկ չ'կայ սորված ըլլալու  
համար թէ՛ աշխարհիս ամեն դատարաննե-  
րու մէջ վերջին խօսքը ամբաստանեալին է :  
Գատաւարութիւն մը որ աստիճան խղ-  
ճահարութեամբ ալ կատարուած ըլլայ, դա-  
տաւորները որքան համոզուած ալ ըլլան  
ամբաստանելոյն յանձապարտութեան,  
դարձեալ անգառնալի վճիռը չ'արձակած  
ինքզինք արդարացեալու միջոցը կուտան՝  
չ'է թէ իբր շնորհ, այլ իբր անվիճելի ի-  
րաւունք՝ անհատի մը, որ աւելի կամ նուազ  
դառնապէս, և թերևս իր կեանքով պիտի  
տուժէ վաղանցուկ վայրկեանի մը մոլեգ-  
նութիւնը, խելագարութիւնը :  
Գատական դիւանաթուղթերու դիմե-  
լու է տեսնելու համար թէ՛ այս միջոցով՝  
քանի՛ քանի՛ անգամներ ամբաստանողին և  
ամբաստանեալին դիրքերը փոխուած են ի-  
րարու հանդէպ, ո՛րքան մահապարտներ  
անպարտ արձակուած և որքան պատիժներ  
ալ աւելի սաստկացած են :  
Արդ, ինչ որ ամեն օր տեղի կ'ունե-  
նայ գէթ ո՛չ՝ վայրենի ազգաց կառավա-  
րական դատարաններու մէջ, ինչո՞ւ չ'թո-  
ղու որ միևնոյն ձևակերպութիւնը կատար-  
ուի հանրային դատարաններուն սինակնե-  
րուն մէջ, ինչպէս են թերթերը. միակ դա-  
տաւորին առջև, որ է ժողովուրդը :  
Իրաւ է. «Արշալոյս» իբր ազգային և  
ժողովրդական թերթ՝ առաջինն եղաւ ար-  
ձագանգող Պ. Բիւրատի մի քանի հակառն-  
կերական ընթացքը. և երբ զայն տեսաւ  
զրկուած ինքնապաշտպանութեան միջոցնե-  
րէն, վեհանախնդրութիւնն ունեցաւ անոր դի-  
մումներուն իմաստը հասկնալու և յիշելով՝  
իբր թերթ՝ իր պարտականութիւնը հան-  
դէպ հանրութեան՝ ըսաւ ամբաստանեալին :  
—Անձը պաշտպանէ՛ ջու միակ դատա-  
ւորիդ առջև . . . : Եթէ «Արշալոյս» զոր  
չ'ենք կրնար նկատել թերութիւններէ  
զերծ, փոխանակ ունենալու այս ընթաց-  
քը, որ մի քանիներու վարմանքը զրգուեց,  
պարզապէս մերժէր ամբաստանեալի մը դը-  
րութիւնը, մինակ այն պարագային և իրա-  
ւամբ պիտի ըլլար թերթ առանց սկզբուն-  
քի և արհամարհելի :  
Առանց հոս կրկնելու ինչ որ մեր լը-  
րագիրներու մասին ըսած եմ «Արշալոյս» ի  
45 թուոյն մէջ, 1899 յունվար 3 թուա-  
կանին, երբ ո՛չ «Նոր Օր» ը և ո՛չ Լսարան  
Ընթերցատուն Ընկերութիւնը յղայուած

անգամ չ'էին, աւելորդ չ'եմ համարիր սա-  
բանաձևը յայտնելու թէ, թերթ մը՝ որ  
խնդրոյ մը վրայ միմիայն իր կարծիքը,  
կամ համոզումը յայտնելով կը բաւականա-  
նայ և կը մերժէ հակակարծիք գրութիւն-  
ներ, այն թերթը ո՛չ թէ հանրութեան,  
այլ անոր աննշան մի մասէն կազմուած  
կուսակցութեան մը միայն կը պատկանի.  
հետեւաբար նա չ'է թէ ժողովուրդին այլ  
իր համախոհներուն շահը միայն կը խորհի,  
և միայն այդ նպատակաւ կը գործէ. Երո-  
պական դրամատուններէն և հաստատու-  
թիւններէն շատերը ունին այնպիսի օրկան-  
թերթեր, որոնք միշտ իրենց զորունան կը  
չալեն, կարծես ժողովուրդը ծաղրելով. Եւ  
թերթ մը, որ «հանրային» քօլին տակ միա-  
կողմանի կը գործէ, արդէն զնաստակար է  
հանրութեան շահերուն :

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՋՈՒՐՆ ՈՒ ԶՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆԸ  
Ջրարուժութիւնը կամ ջուրի միջնորդու-  
թեամբ այլևայլ եղանակներով ու ձևերով  
տրուած հիւանդատածական դարմանները մաս-  
նաւորապէս կը գիւրացնեն մորթին վրայ ջու-  
րին ունեցած սեփական ներգործութիւնը, և  
անոր հրաշագործ ազդեցութեան յոյժ կը նպաս-  
տեն : Ջուրը կ'ազդէ իր ջերմաստիճանով, ճնշ-  
մամբ և լուծական բնաւորութեամբ :  
Ջրարուժութիւնը քառորդ դար առաջ պարզ  
լոգանքներու եւ քանի մը տեսակ ջրցայտերու  
(տուր) մէջ կը սահմանուէր : Սակայն այսօր,  
մտքին ու պէտքին ճնշող ազդեցութեան ներքեւ  
այդ անձուկ շրջապատը քայքայելով՝ անհրեւոյթ  
եղած, և թռիչ տուած է անկայուն ջուրին, որ  
բնութեան ծոցէն դանաղան ազդակներ իրեն յա-  
րելով՝ լուսաւոր կեդրոններու մէջ հրաշալիքներ  
կը գործէ ընդարձակօրէն : Մարդիկ, և մասնա-  
ւանդ թունադեղապատները եթէ քիչ մը աւելի  
խոհուն ըլլային ներկայ ժամանակիս մէջ, և  
անկեղծութեամբ, խոնարհութեամբ ու ներհուն  
մտքով անդրադարձ ակնարկ մը նետէին անցեա-  
լին ու ներկային մէջ ապրող ջրասէր ժող-  
վուրդներուն կենցաղին, հուժկու կազմութեան  
և առողջ կեանքին վրայ, և մասնաւորաբար  
քննէին ջուրին հզօր բնութիւնն ու աշխարհի  
մէջ կատարած հսկայ դերը, անտարակոյս պի-  
տի փութային օգտուել անոր ձրի ու օգտաշա-  
ս պարգեւներէն :  
Նախախնամողը երկրին հիմերը ընդունայն  
ջուրերու վրայ հաստատած է՛ : Ջուրը՝ որ մեր  
հողագունդին երեք չորրորդ և մեր մարմնոյն  
երկու երրորդ մասը կը կազմէ, իր մաքրողա-  
կան բնութեամբ խիստ անհրաժեշտ է կեանքի  
զոյութիւնը պահպանելու համար : Բոյսերէն ըս-  
կանալ մինչեւ ամենակատարելագործեալ էակը՝

մարդը, ջուրի պէտք ու շատ պէտք ունին: Արտաքուստ ու ներքուստ մարքելու, եւ բնութեանն ստացուած սննդարար ու կենսատու ստանդարտները իւրացնելու միակ միջոցն է ջուրը, եւ մանաւանդ լեռներու կողերէն ու սպառածներէն բղխած զուտ ու յստակ ջուրը՝ զոր երբէք զանց ընելու չ'ենք մեր կեանքին մէջ: Մաքուր ու անուշակ ջուրը խմելու եւ լոգնալու միակ բանն է: Հիւսուածները՝ աղի ու կարծր ջուրերը չ'են կրնար ընդունել, անոնց մէջ գրանուող հանքային անգործարանաւոր մարմինները յօրինուածէն չ'արտաքուստ. հետեւաբար, թէ այս եւ թէ ընական օրինաց զանցառութեամբ գոյացող եւ ամենուրեք վիսացող անհամար մանրէներուն պատճառաւ՝ լաւագոյն է ուղղակի աղբիւրէ չ'ըլլող ջուրերը ետացնել, օգուտը եւ ապա խմել:

Ճշմարտութիւնը իրաւունք է: Ուստի, ջուրը եղեմին մէջ Ադամին, եւ այնօրէն մինչեւ ցայսօր ալ անասուններուն մէկ հատիկ, ընդհանրական ու անփոփոխ ըմպելին ըլլալով, անոնց՝ անոր մաքրողական յատկութիւնը մարդէն աւելի լաւ ճանչնալը, եւ իրենց անբնականութեան մէջ՝ այս նկատմամբ, ներկայ ողջ աշխարհու ու անձնասպան բանասերէն մտացի ու խոհեմ լինելը ստոյգ ու ճշմարտութիւն է, եւ մեր ըրած բաղդատական տրամաբանութիւնն ալ անհերքելի իրաւունք է: Բնութեան հարազատ ու կատարելածին զաւակը միւս ստորաբաժան արարածներէն աւելի ընական ըլլալու տեղ՝ այլասերած, անբնականացած է այսօր, եւ փոխանակ երկնքէն՝ համատարած գտարանէն վազող ու արեգակին շողողուն ճառագայթներուն եւ կենդանաւորող անուշ հովիտին ծաղկարոյր համբոյրներուն ներքեւ կարկաշտը պայծառ ջուրին՝ անյազաբար, ցնորամտօրէն կ'սպառէ մութ, մօրացած տակաւներու եւ շիշերու մէջ պահուած՝ կամ տուները, իբր անհրաժեշտ ըմպելի պատրաստուած ձերմակ, կարմիր, դեղին, թուխ, սեւ ու կանաչ անբնական այլազան խառնուրդներ ու սպակաւող պղծութիւններ՝ որք կը թուաւորեն կեանքին էական տարրը՝ արիւթը, եւ ուր ուրեմն կը քանդեն ամբողջ հոյակերտ կազմուածքը:

Մարդուն՝ ինչպէս եւ անասուններուն կազմութեան բոլոր հիւսուածներուն գործունէութեամբ մաշած ու կուտակուած գործարանաւոր նիւթերուն անպէտ ու թունաւոր բեկորներն ու գոլորշիները՝ մարմինէն արտահանող չորս կարեւոր գործարաններէն՝ երկիւմունքներէն, աղիքներէն, թոքերէն ու մորթին ի բաց վտարելու համար՝ խիստ կը կարօտինք զովորար սեւ պաղուկ եւ մերթ ալ տարուկ ջուրի: Չափահաս առողջ մարդու մը այս գործարանները, ըստ բընական օրինի, օրը 3-4 լիտր ջուր արտաքսելու են, կանոնաւորապէս ու առողջապահիկօրէն առնուած անուշահամ ջրանակին համեմատութեամբ:

Վկայեալ կ'ընթարաջրաբոյժ եւ մարձագէտ (Շարունակելի) Կ. Գ. ՈՒՋՈՒՆԵԱՆ Գահիրէ 17 Հոկտ. 1900

ՄԱՅՐԸ

Ա. Ս. Օ.

«Վաղուան ուղեւորը» ելաւ գնաց ու սըրացաւ դէպի խաւտրակուտ Ափրիկէի մի մասը, զոր մեր գլոբոսական նստարաններուն վերայ, մեր աշխարհագրութեան գաստուներու առջեւ կը բաղդատէինք դժոխքին «որ է ընդ երկրաւ» . . .

Սուտան, Նուպիա . տարիներ, ու տարիներ ու տարիներ պէտք էր ճամբորդել հոն հասնելու համար, եթէ երբէք կարելի ըլլար հասնել: Մարդկային արարած կա՞ր այն բոց ու կըրակներուն մէջ, թէ միայն ջալամներու, փիղերու, առիւծներու, վագրերու, վիշապներու, բոժոժաւոր օձերու, հսկայ կարիճներու երամակներէն էին որ կը լիստային ու կը զեռային այն յարաբոյժ սեւազածովին մէջ:

Քիչ ետքը մեզի պատմուեցաւ որ մարդոց նման էակներ կային հոն, խափշիկներ հաստա-

չուրթն, վայրագ աչքերով, անարկու դէմքով, արիւնարոյր դէմքով, արիւնարոյր, վարչահոտ, աներեւակայելի կերպով վիթխարի «ոտքերը երկրի վրայ եւ գլուխը ամպերու մէջ», որոնք մարդիկը կը շամբրեն ճնճուկի նման. եւ կաթիլ առ կաթիլ անոնց իւղը հոսեցնելով մոխրապատ խարոյկի մը մեղմ եւ բազմատանջ ջերմութեան առջեւ, կը լսուին զանոնք զազանալին գոհունակութեամբ մը, աչքերնին խըխեւելով, եւ անոնց ոսկրները կը կրճեն մարգարտաշար ակռանին իրարու բաղխելով եւ պինչերնին լզելով:

Մանկական երեւակայութիւնը բորբոքեցնող եւ գոռոզ ու խարսեալ մազերը փշաքաղող այս սեղեկութեանց առջեւ մի քանի սկեպտիկական ոգի արտայայտող յանդուգն ձեռքը կուտային «հազար ու մէկ գիշերներ» ու հաստը մը, որուն մէջ այն խաբշիկներու եւ՝ ըստ պարագային՝ մերթ բարի եւ մերթ չար ուրիշ արարածներու սովորութեանց, կենցաղին մանրամասն նկարագրութիւնները կը կարգայինք սրտատրոփ աչքերնին խոշորացած եւ ճակատնիս պաղ քրտինքով ողորուած . . . : Եւ ալ գիշերները կ'անցնէին զառանցելով, ընդունակելով, օգնութեան աղաղակներով, հեծեծանքներով . . .

Օրեր անցան, տարիներ բոլորեցան. ամենինչ փոխուեցաւ. սեւ խաւարը փարատեցաւ, կարմիր լոյս մը ծագեցաւ: Քառասներորդ ու թեւաւորները, սողուններն ու զեռունները տեղի տուին երկոտանիներու առջեւ. դժոխքը պտուղատու ծառերով հողանաւորուեցաւ, աւազածովը իր հոյակապ պալատներն ունեցաւ շամփրող խաբշիկները յոգս ցնդեցան, եւ մնացեալները՝ իրապէս գոյութիւն ունեցող մարդկային էակները՝ սպիտակամորթներուն սրածայր սուլիներուն վրայ ստատանցան . . .

Եւ երբ «վաղուան ուղեւորը» մեկնեցաւ, ծխարձակ շոգեկառքին խելառաբար սրարչաւ վազքին միջոցին նա չ'խորհեցաւ ո՛չ իր մանկական սպաւորութեանց, ո՛չ այն մորմոքին նա կը պատճառէր իր տեսքով չ'յազեցած կարօտակէզ, ձերունաղարջ մօր մը կարկվէր սրտին. ո՛չ, նա չ'խորհեցաւ եւ ո՛չ մի բանի. կամ՝ աւելի ճիշտն ըսելով՝ խորհելու պարապուրդ չ'ունեցաւ. ամբողջ անձը այնքան լիցուն էր այն վիժած մողովով, յորմէ կը վերադառնար, այն Լսարան-Ընթերցատուն ընկերութիւնով, որուն բազմաշխատ հիմնադրիներէն մին էր՝ այն «Նոր-Օր» ու, զոր յղացողներուն խիստ անկողծ, չափազանց լաւատես, անխոնջ դաղափարածաւալ, ուղղափառ հաւատացեալ մի ստատորդն էր:

Լսարան-Ընթերցատուն ընկերութիւնը եւ «Նոր-Օր» կ'իսաշաքաթաթերթը. ասոնք էին անոր մայրը, անոր հայրը, անոր սիրեցեակները, ասոնց վրայ հազար ու մէկ դեղածիծաղ, ճաճանչաւէտ երազներով համակուած կ'ընթանար դէպի իր նոր պաշտօնատեղին, նետուելու համար «կ'իսապայքարին մրցումին մէջ» ինչպէս կ'ըսես քու յառաջդիմասէրի եւ բանաստեղծի աւելնուով:

Գարձեալ անցան հազիւ երկու ամիսներ, եւ անա Լսարանի բոլորտիքը խլացուցիչ աղմուկներու եւ «Նոր-Օր» ի շուրջը շահագիտական վէճերու արձագանքը հասաւ մինչեւ անոր մենավայրը:

Անշուշտ զարմացաւ ի սկզբան, եւ յետոյ ապշեցաւ՝ տակաւ առ տակաւ լսելով եղելութիւններ, նախապէս ծրագրուած հետեւութիւններ, կանխամտածուած փոքրոգութիւններ, քողարկուած ճշմարտութիւններ, պատրաստուած վատութիւններ, պաճուճուած ստույգութիւններ . . .

Ընկերատիրական զգացումն այս աստիճան վատթարացումը, ազգասիրական ձեռնարկի մը մասնաւոր նպատակաւ թաղուն ձգուած ծակտիքը, դերակատարներու ումանց մեղքութիւնը, ումանց միամտութիւնը եւ ումանց նեւգամտութիւնը միշտ լաւատեսներու եւ անպայման անձնուէրներու սրտին հպելի չ'ըլլալով իրաւամբ կը խելագարեն զանոնք:

Յանկարծ, ի քիթի ակնան, արմատական փոփոխութիւն կրեցին, բոլորովին կերպարանափոխուեցան անոր ապստամբ սիրոյն ստար-

կաները: Վարդ էին, տատասկ եղան. թոթովախօս մանուկ էին, հայհոյալից աւազակ եղան. անմեղ էին, մահապարտ եղան. կոյս էին, խառնակենցաղ եղան. հրշտակ էին սատանայ եղան . . . եւ անոր սիրագեղ սիրտը յօշոտեցին, ոտնակոխեցին, ճմլեցին:

Ունայնութիւնն ունայնութեանց . . . իսկ այն ալեկերը՝ որուն չ'էր խորհէր, զոր կ'սպառնար զրկել իր նամակներէն, որոնք սպեղանի պիտի ըլլային ծերունուոյ կարի վշտացեալ սըրտին, նէ՛ որ անոր կ'ըսէր հեղձամղձուկ ձայնով, արտասուած թոր աչքերով, - չ'է, չ'պիտի . . . լամ . . .

Մինչդեռ արեան կոհակներ կ'ելեւէջէին իր բազմաշարձար արգանդին մէջ, հաւատար եղի՛ր որ այն ծերացած, այլ իր զաւակին համար միշտ սիրահար, միշտ կոյս, միշտ գուրգուրալի սիրտը երբէք չ'է փոխուած, եւ երբէք չ'պիտի փոխուել, ցորչափ արեան վերջին կաթիլ մը պիտի գտնուի անոր խորշերուն մէջ . . . : Մօր մը սիրան է այն առաւել պաշտելի քան զՀիմէն:

Եւ եթէ երբէք անկէ խուած արձագանք մը հասնի «վաղուան ուղեւոր» ին ականջներուն, զա պիտի ըլլայ որդեկանքի մօր մը անձկակարտ հառաչանքի արձագանք:

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՆ ՕՐԷ ՄԸ

Ձիւն ամպերու կոյտեր ցիբ՝ Ձինջ փրփուրներ ովկէանին այս անձիբ. Յոյզ ու լիզու, դերբնային բառ ու բարբառ կը խօսին հետո գաղտնաբար:

Կը խօսին լոկ քու վրադ, կը պատկերեն գեղը ու հրապոյրդ անարատ Ու խօլումով երազներ, ծով ատյատակ, կ'ալեկոծին դանկիր տակ:

Կ'ալեկոծին փոթորկած՝ Գիբկդ անդորրող եւ էութիւնս բազմաբկած Ու տիեզերք՝ կոհակներուն անոր նեղ, Թոհոհ մ'իմի կ'ըլլայ նեխ:

Թոհոհ՝ մ'ուրկէ հէգ հոգին, կը վերանայ բոցերուն հետ կրակին. Այն ամպերուն մէջ կ'որոնէ այլ աշխարհ, Աշխարհ մ'անուուն, անաշխար:

Աշխարհ՝ մ'ուր գերծ ու հեռու Աղմուկէն այս, ո՛ւր էր թէ, ո՛ւր, իրարու փարած մնայինք, թրթուր քնարս բերկբալար, Ու մեր կեանքին վերջ չ'ըլլար:

Ձիւն ամպերու կոյտեր ցիբ՝ Ձինջ փրփուրներ ովկէանին այս անձիբ, Ինկած առջեւ տարփասանջիկ հողմիկին, ո՛ւր կը չուեն լալագին:

Ո՛ւր . . . չեն խօսիր ա՛լ վրադ, Չ'են պատկերեր գեղը ու հրապոյրդ անարատ, Անցան գնացին՝ երազներ, ծով անյատակ՝ Ալեկոծած գանկիս տակ:

Ալեկոծած իս ու քեզ, Մասնեցին հոս կսկիծներու աղեկէզ, Յիշեցուցին մահամեծծիկ մեր տարին, Մեզ իրենց հետ չ'տարին:

Մեզ թողուցին երբուն, Մեր ետեւէն չնշող կեանքի հովերուն, Անոնք յաւէտ վերբը կան, կը մնան, Մենք հոս կ'երթանք գերեզման:

Մենք հիւլէներ, կ'ըլլանք հող, Ա՛խ, փշուէինք գէթ Իշխողին այն խորհող Աչքերուն մէջ անգութ անքուն ու անսուգ Որ չեն կաթեր արտասուք: Գահիրէ 16 Հոկտ. 1900 ԳԻՈՒՍԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶՄԻ ԲԱՑԱՌԻԿ ՊԲԱԿ  
« ԲԱԶՄԱՎԷՊ »

« Փոխան մտաւորական մտնողի , որ  
ինձ յանձնուած է բաշխել ձեզ , պատառ  
մը հաց տուէ՛ք ինձի » կ'աղերսէ Հայ որ-  
բը՝ Վենետիկի Միթրարեան Միաբանութե-  
նէն, Վեր . Հ . Ս . Եփրեմեանի բերնով :

Եւ յիրաւի Հայոցս համար մտաւորա-  
կան մտնող մ'է որ կը ջամբուի պատկե-  
րազարդ պրակի մը ձեռով , զոր խոստացա-  
ցած էր վերոյիշեալ Պատ . Միաբանութիւ-  
նը — գրեթէ տարիէ մը ի վեր — և որուն  
հասոյթը պիտի պատկանէր Հայ որբերուն  
առանց խտրութեան :

Պրակը ինքնին արդէն հայ գրական  
ասպարէզին մէջ խիստ գնահատելի նորու-  
թիւն մ'է իր թուղթին մաքրութեամբ և  
գեղանկար պատկերներով , որոնք մեզի  
գեղեցկին ճաշակը ներշնչելէ զատ՝ կը յի-  
շեցնեն մանաւանդ Գերմանական և Ամերիկ-  
եան հանդէսները , որոնց տպագրութեան  
մաքրութեանը և արուեստագիտական ճա-  
շակին վրայ մարդ իրաւամբ կ'զմայլի :

Իսկ պարունակութեան մասին աւելորդ  
է բան մը ըսել . վասն զի արդէն երկու  
դարերու փորձառութեամբ գիտենք թէ՛  
ինչ որ կ'ելլէ Վենետիկեան այդ մշտազբաղ  
գրիչներէն և Տպարանէն , դա գրեթէ միշտ  
իրեն հետ մեզի կը բերէ հայրենեաց բոլորը :  
Այս անգամ ալ Հայկական անցեալ և ներ-  
կայ մեծ և պատկառելի դէմքերու առջև  
կը դանուկնք , հանդերձ համառօտ կենսա-  
գրութիւններով :

Պրակը ճոխացեալ է Հայ գրականու-  
թեան և Մամլոյ ներկայացուցիչներուն ու-  
մանց լուսանկարներով : Սրտառու է մա-  
նաւանդ Հայ որբերէն ումանց խոհուն , ու-  
մանց անգիտակ և ամենուն թաղծալից գիր-  
քն ու կեցուածքը Մարաշի , Կիպրոսի և  
այլուր բացուած որբանոցներուն մէջ . որ-  
բեր՝ որոնց ամենքն ալ կը խնդրեն հաց ,  
զոր իւրաքանչիւր հայ անհատ անտարակոյս  
պիտի փութայ նուիրելու « փոխան իրեն  
տրուած մտաւորական մտնողի » :

ԳՐԶԻ ԶԲՕՄԱՆԻ

Ուրախութեամբ կ'ողջունենք նաև Տ .  
Քիւրսանի քնարերգութիւններէն « Գրչի—  
Զբօսանք » ի առաջին տետրակին ի լոյս  
գալը Տ . Ս . Իարբինեանի Տպարանէն :

Ներկայ թուով նմոյշ մը կուտանք ար-  
դէն ծանօթ Քիւրսանի սոյն գործէն , որ  
կը յուսանք թէ՛ քաջալերութիւն պիտի  
գտնէ մեր Պատուարժան ազգայնոց կողմէ :

« ՀԱՆԳԻԾ »

ՍՕՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՕՐԿԱՆ

Այս է անունը նոր Ամսաթերթին որ  
սկսաւ լոյս տեսնել ժընէվի մէջ , և որուն  
երկրորդ թիւը ստացանք , հետեւեալ պա-  
րունակութեամբ .

- 1. Ամերիկայի հայ բանւորները Վ .  
Վահունի .
- 2. Երկաթուղիները Տաճկաստանի մէջ .  
Խ . Դիմաքսեան .
- 3. Սօցիալիզմ ( Թեօրիա եւ Տաֆսիֆ ) .  
Ե . Պ .

- 4. Հայկական Յեղափոխութեան ծա-  
գուն և պատճառները . Ա — Լն .
- 5. Վիլհելմ Լիբքնեխտ . Ե . Պ .
- 6. Սօցիալիզմ և գիւղացիներ ժ . Ժօ-  
ուէսի թարգմ . Տիկին Ա . Երուանդեան .
- 7. Սօցիալիստական քրօնիկ . Լ . Ա-  
րեգեան .
- 8. Բաղաքական Տեսութիւն :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ն . Բ . Խտիվը նոյեմբեր 1 ին առաւօտ-  
եան ժամը 11 ին Գահիրէ պիտի ժամանէ  
Իր յատուկ կառախուժքովը :

ՆԵՄԱՆԱԲՕՍՈՒԹԻՒՆ

Կիրակի օրը մեծ շքով տեղի ունեցաւ  
նշանախօսութեան հանդէսը՝ Համեստափայլ  
ՕՐԻՈՐԳ ՆՈՅՑԻ ԵՐԻՏՅԱՆ ՊԵՅԻՒ ԸՆԴ  
ԱՂԻՆ Տ . ՅՕԳԲ . ՄԻՍՏԱԳ ԺԱՄՈՂՅԱՆԻ .  
Երկու կողմանց ազգականներ եւ  
բարեկամներ ներկայ էին հանդիսին .

Ս . Աստուածածին եկեղեցւոյ պաշտօն-  
եայք հանդիսապէս կատարեցին նշանօրհ-  
նէքի արարողութիւնն :

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները  
երկու Ազնիւ Խօսեցեալներուն եւ զանոնք  
չըջապատող ազգականաց :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 29 հոկտ . — Պօէրներու ջոկատ  
մը Հօբսթատի քով կուռէ մը ետքը տիրա-  
ցաւ երկու թնդանօթի : Անգղիացւոց կու-  
րուստն է 7 մեռեալ , 11 վիրաւոր և 15  
գերեզմարուած : Այժմ պատերազմող Պօէր-  
ներուն ամբողջ թիւն է 15000 :

Իրէթօրիա 29 հոկտ . — Սլէսվիկի Գը-  
րիսթիան իշխանը հոս մեռաւ աղետապէս :

ԻԳՆԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱԾԵԱՆ

Դ Ե Ր Զ Ա Կ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ — էլ — Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր  
հանրածանօթ Անգղիացի վաճառական — գերձակ  
ԺՕՆ ԲՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ  
աշխատելով՝ արհեստին ամեն նբութիւններուն  
կատարելագոյն հմուտ եւ փորձառու , այս ան-  
գամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փա-  
շայի Տայրաին դիմացը , նորաչին խանութնե-  
րուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յա-  
ճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան ,  
արհեստի նբութիւն տեսնելով , նորաձեւու-  
թեանց զանազանութիւններ գտնելով , եւ մա-  
նաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր  
վճարումներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր  
զգեստներ ունենալով :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՀէճԱԶԻ ԵՐԿԱԹԻՈՒՂԻՆ . — Փարս-Տ'ա-  
շիսաւստի մէջ կը կարգանք .

Հիճազի երկաթուղին մտադրուած է

միայն , բայց և այնպէս սկսած է ծառա-  
յութիւններ մատուցանել նրբամիտ վար-  
պետորդներու , որոնք եգիպտացիներուն  
իրենք զիրենք կը ներկայեն իբր Հէճազի  
երկաթուղւոյ վարչութեան կողմէն խրկուած  
լաւ պաշտօնեաներ գտնելու համար : Բար-  
ձր ամակամներով պաշտօններ կը խօստա-  
նան միամիտ դիւրախաբներուն , և զանոնք  
յանձնարարելու խօստումով հինգ ոսկւոյ ա-  
ւանդ մը կ'առնեն նախապէս : Ըսելու հարկ  
չ'կայ որ պաշտօնէութեան թիկնածու ե-  
գիպտացին՝ դրամը տալէն ետքը՝ վարչու-  
թեան պատուիրակին երեսը ալ չ'տեսներ :  
Կը յուսացուի որ կառավարութիւնը վերջ  
մը պիտի գնէ այդ խաբեքներուն շահա-  
տակութեանց :

ԱՀՄԷՏ ՄՈՒԻԹԱՐ բաշայի նախկին ընդ-  
հանուր քարտուղարը Մօհսէն պէյ առջի օր  
ընդունուեցաւ Ն . Բ . Խտիվի կողմէն :

Կ'ըսուի թէ Մօհսէն պէյ Ն . Բարձրու-  
թեան հաղորդեց այն փափաքը զոր Սուլ-  
թանն ունի , իր քեռայրը Մահմուտ բաշա  
Տամատին Կ . Պօլիս վերադարձը տեսնելու :

Կ . ՊՈՒՄԷՆ կը հեռագրեն Թալազին .

« Անցած ուրբաթէն ի վեր շուրջ հա-  
րիւր հայ անհատներ վտարուեցան մայրա-  
քաղաքէն : Ընդհանրապէս օստպաշիներ են  
ասոնք , որոնք կասկածելի եղած են իբր  
յեղափոխական : 50 հայ ալ բանտարկուե-  
լէն ետքը ազատ արձակուեցան : Ուրիշ շա-  
տեր կը մնան բանտերու մէջ , և ամեն օր  
նոր ձերբակալութիւններ տեղի կ'ունենան :

ԹԻՔԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ . — Ըստ բա-  
րիզեան թերթի մը , վերջին հինգ տարիներ  
ու միջոցին Փրանսական Հանրապետութեան  
զինուորական և քաղաքական 30,000 պաշ-  
տօնեաներ և 39,000 պարզ անհատներ Օս-  
մանիէ կամ Մէճիտիէ շքանշաններն առին :  
Շեճազարի նշան առնող Փրանսացւոց թիւն  
է շուրջ 20,000 :

ԶԻՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

Երբ Զինական հարցով ժողովուրդը ըս-  
կսաւ շահագրգռուիլ , Ամերիկայի , Նիու-  
եօք Հէրալտ թերթին խմբագրապետը Պ .  
Պէնէթ՝ լուսաշողջող գաղափար մը յղացաւ ,  
որուն հետեւութեամբ թերթին ունեցաւ Զի-  
նացի խմբագիր մը : Այս նորեկին խմբա-  
գրականները կը լափուէին իր համացեղնե-  
րուն կողմէն . մինչդեռ ո՛չ — համացեղները  
դատապարտուած էին չինարէն սորվելու  
զանոնք հասկնալու համար : Վերջապէս հա-  
սաւ այն երջանկաւէտ օրը և Ամերիկացի  
հասարակութիւնը կրցաւ կարգալ չինարէն  
խմբագրականէ թարգմանուած հետեւեալ  
մասը :

« Եթէ այս տողերը կարգայ մեր չինա-  
ցի եղբայրներէն մին , թող հաճի ընդունիլ  
հեղինակին բարեւը և իննսունըթօթը աստ-  
ուածներուն օրհնութիւնը անոր վրայ թող  
իջնէ : Եթէ շուն քրիստոնեայ մը զայն հար-  
ցաքննէ այս յօդուածին մասին , թող հա-  
ճի պատասխանել որ ձաբոնցիներու և Զի-  
նացիներու մէջ ահարկու պատերազմներու  
վրայ կը խօսի : Այս լրագիրը կը պատկա-  
նի անիծեալ քրիստոնէի մը որ չինացիի մը  
թուրքին անգամ արժանի չ'է : »

Մեծ յաջողութիւն գտաւ այս խմբա-  
գրականը : Թերթը աւելի սպառեցաւ , ա-  
մերիկա ծափահարեց և Պ . Պէնէթ խնդաց ,  
բայց ուրիշ կերպ խնդացած ըլլալու է :

վասնզի ընթերցողը ի զուր փնտռեց երկնային կայսրութեան զաւակին խմբագրականը յաջորդ թիւերուն մէջ :

Գերմանիոյ կայսր Կիլիօմ Բ. իբր հըռուի (թըլլըսթ) կը կրէ իր մեծ-հօր Կիլիօմ Ա. ի զոյգ մը թեւոցի կոճակները, Մեծն Յրէտէրիքի մէկ ծխատուփը և նաբուլէօն Ա. ի մէկ ծխատուփը, թէև քթախոտ չ'գործածեր, և մասնաւոր օրեր ալ կը դնէ Կարոլոս ժ.ի մէկ մորակը, զոր այս վերջինը կորսնցուց Բօթալայի պատերազմի միջոցին : Կայսրը խորապէս համոզուած է որ այն առարկաները բարեբաստութիւն կուտան իրեն :

Շուէտի Օսկար թագաւորը երբէք մատեն չ'հանէր պարզ մատնի մը զոր իր հաւը Պէրնատթ' կը կրէր երիտասարդութեան միջոցին . և որուն տէր ըլլալ էշխանութեան տէր ըլլալ կը նշանակէ, կ'ըսուի : Թագաւորը լեղապատտաւ կ'ըլլայ եթէ յուղարկաւորութեան մը հանդիպի :

Պուլկարիայի իշխան Յէրտինանտ' իր արտոններուն մէջ կը պահէ ծերացած ձի մը, զոր Պուլկարիայի իշխան Ալէքսանդր կը հեծնէր Սլիվիցայի պատերազմին միջոցին : Այժմեայ իշխանը համոզուած է որ խնամելով այն ձին իր իշխանութիւնը կը պահէ :

Պաւլիէրիայի Փոլս-Իշխանը կը վախնայ ուրբաթ օրերը որսի երթալէ :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 5999, 5301, 168, 1520, 634, 752; 860, 1214, 1239, 1859, 2575, 2649; 2752, 3035, 3516, 3611, 4014, 4273; 4520, 4544, 4635, 4810, 4819, 4832; 5969, 6546, 7794, 8055, 8147, 8773

ԱԻԱԶԱԻՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մագաղաթեայ բըժըղկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ, օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ, կը փութամ յայտարարել աւազակտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս դեղագործներու և բժշկաց՝ որպէսզի ուշագործութիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ :

Աւազակտի միակ դարմանն ունենալու համար պէտք է գիմել ստորագրելոյս հասցէին Ի ԳԱՖԷ ԵՓՐԱՏ, ՄՈՒՋԻՔԻ ԶՕՐԱՆՈՑԻՆ ԳԻՄԱՑ — Մէյտան ԱՊՏԻՆ :

Գիները

- 10 ֆրնդ մէկ բաժին աւազ ունեցողի
20 » երկու » քար ունեցողի .
30 » երեք » արմատացած հիւանդութեանց :

Սոյն դարմանը դործածուած օրէն իսկ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելապէս առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները :

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱՌՈՐԾԻԱՆ

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օսեանի ղեկարարն իրենցի փողոցին մեջ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին :

Այցեխարտեր, Երչարտերակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԻՔ ՈՒՍԱՆԻԼ

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կարարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ, կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գրամագլուխ և միանգամայն քիչ առեւի մէջ արհեստը ուսանելու փափաքը ունենայ :

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցիլ, անոնք որ հետամուտ են :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Դ

Նոր կեանք ի եւ Անանիոս Ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս գիմեն, գիւրագին զայն գնելու :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 1401, 6427, 4224, 7713, 3057, 1318; 218, 7092, 9300, 2571, 5534, 1866; 7228, 1503, 9765, 3287, 9328, 7455; 1753, 3638, 1348, 1999, 5289, 4754; 475, 4133, 5370

ՏՅԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարաժիհները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅԻ

Քանի որ ԱԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐԵ Ի նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐԵ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօլի բազմազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Պօնոկրայներու :

Ա Չ Դ

Քղիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Շանօեանի որդի Պ. Կարապետ Շանօեան 26 ամեայ երիտասարդը Հայաստանի զէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաւակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտաստիճմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նրմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

( Գաղթականաց կեանքէն )

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԱԿՐԱՍՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդութիւնը ուղղորդեն, կրնան գիմել Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր Տնօրէնին :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապուրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԱՎԻՉՅԵՆ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա